# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1476-Ա « 19 » մարտի 2026 թ.

## ՀԱՂԹԱՆԱԿ, ՎԱՐԵԼԱՀՈՂ-ՏԵՂԱՄԱՍ 12-3² ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արշակ Դարբինյանի դիմումը՝ Հաղթանակ վարելահող-տեղամաս 12-3² հասցեում գտնվող, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրով իրեն փոխանցված հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի 24.09.1995թ. հ.Ա028981 պետական ակտը, նոտարի 17.07.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ հ.3550 վկայագիրը, 25.11.2024թ. նոտար Աննա Թովմասյանի Ե-0279 գրությունը և Հայաստանի Հանրապետություն կադաստրի կոմիտեի հ.ԱՏ-07062024-01-1175 տեղեկանքը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ վարելահող-տեղամաս 12-3² հասցեի հողամասի փաստացի մակերեսը կազմում է 1400.0քմ՝ ինչքան որ ամրագրված է փաստաթղթերում, Հայաստանի Հանրապետություն կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 12-րդ գոտում և կադաստրային քարտեզով իր մեջ ներառում է 01-007-0166-0019 ծածկագիրը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 12.03.2026թ. Դ-20668-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Հաղթանակ վարելահող-տեղամաս 12-3² հասցեում գտնվող, 1400.0քմ մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**